ՀԱՅ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԸ ԼՂԻՄ-ՈՒՄ

Մայր Հայաստանի արվեստի վարպետները հաճախակի են այցելում Արցախ, լինում աշխատավորական կոլեկտիվներում, արցախահայությանը ծանոթացնում հայկական արվեստին, տեղի երաժշտական հաստատությունների ուսուցիչներին ցույց տալիս մեթոդական և գործնական օգնություն:

Օրերս (նոյեմբերի 28-ից մինչև դեկտեմբերի 3-ը) Ստեփանակերտում էր գտնվում Հայկական ԽՍՀ կուլտուրայի մինիստրության ուսումնական հաստատությունների բաժնի պետ Հակոբ Հակոբյանի գլխավորած երաժիշտ-արվեստագետների մի խումբ: Խմբի մեջ էին Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի պրոֆեսորներ Արմեն Բուդաղյանը, Յակով Զարգարյանը, Մեդեա Աբրահամյանը, արվեստագետ Արմենուհի Մարտիրոսյանը, ասմունքող Սուսաննա Գաբրիելյանը, երգիչ Մկրտիչ Մկրտչյանը և ուրիշներ: Նրանք եղան քաղաքի երաժշտական ուսումնական հաստատություններում, մեթոդական ու գործնական օգնություն ցույց տվեցին ուսուցչական կոլեկտիվներին: Նրանց համար կազմակերպվել են սեմինարներ, կոնսուլտացիաներ, դասախոսություններ: Նախատեսված է առաջիկայում նմանօրինակ օգնություն ցույց տալ երաժշտական մյուս մասնագիտությունների գծով:

Այդ հանդիպումները տալիս են ցանկալի արդյունքներ: Ուսուցիչները հարստացնում են իրենց գիտելիքները, ստանում սպառիչ պատասխաններ ուսման ծրագրերի յուրացման, ուսուցման մեթոդների կիրառման հարցերի մասին:

Նախատեսված է հետագայում էլ կազմակերպել Երևանի և Արցախի երաժշտական ուսումնական հաստատությունների կոլեկտիվների փոխայցելություններ:

Առաջիկայում, օրինակ, Երևան քաղաքում կկազմակերպվի Առնո Բաբաջանյանի անվան հանրապետական դաշնամուրային մրցույթ: Այս մրցույթին կմասնակցեն նաև Արցախի դաշնակահարները, որի համար նրանք ստացան մրցույթի ծրագրերը: Դա հնարավորություն կտա բացահայտել շնորհալի դաշնակահարներին, ուսումնասիրել և մասսայականացնել մանկավարժական աշխատանքի լավագույն փորձը, խրախուսել լավագույններին:

Այս ամենից բացի, Երևանից ժամանած հյուրերը փոքր համերգներով հանդես են գալիս Ստեփանակերտի հիվանդանոցներում, դպրոցներում, երաժշտական ուսումնական հաստատություններում և մարզային թերթի՝ «Խորհրդային Ղարաբաղի» խմբագրատանը: Ունկնդիրների վրա անմոռաց տպավորություն թողեցին Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստուհի, կոնսերվատորիայի պրոֆեսոր, թավջութակահար Մեդեա Աբրահամյանը, ասմունքող, համամիութենական և հանրապետական մրցույթների դափնեկիր Սուսաննա Գաբրիելյանը, երգիչ Մկրտիչ Մկրտչյանը և ուրիշներ:

Արցախի համար այս ծանր ու ճակատագրական օրերին մայր Հայաստանի զավակների նմանօրինակ վերաբերմունքը ավելի է արիացնում, նոր ուժ տալիս արցախցիներին իրենց աննկուն պայքարում:

Լ. ՄԿՐՏՉՅԱՆ
(Մեր սեփ. թղթ.)